Արձանագրություն N2

**ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/1 ծածկագրով էլ.աճուրդի ընթացակարգով Ծաղկաձոր համայնքի կարիքների համար համակարգիչների, բազմաֆունկցիոնալ տպիչ սարքերի և անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի**

ք.Ծաղկաձոր 10 սեպտեմբերի 2018թ.

Մասնակցում էին հանձնաժողովի

նախագահ՝ Գ.Հայրապետյան

անդամներ՝ Ն.Խաչատրյան

Լ.Խաչատրյան

Վ.Հայրապետյան

Է.Հովհաննիսյան

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. **ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/1 ծածկագրով էլ.աճուրդի ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին**

---

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով, 2018 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 09:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարան, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

2. **ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/1 ծածկագրով էլ.աճուրդի գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

---

(Գ.Հայրապետյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| h/h | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | «ԳՐԵԳԱՐՏՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ |
| 2 | Կոմպլենդ ՍՊԸ |
| 3 | Կոմպասս ՍՊԸ |
| 4 | Նորմա-պլյուս ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին**

---

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ

3.1 Մասնակիցների ներկայացրած հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերն առկա են և դրանք համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ՝

«Կոմպլենդ» ՍՊԸ-ի: Վերջինիս կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում բացակայում է լիազորագիրը:

3.2 Գնահատող հանձնաժողովի որոշեց՝

*Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի պահանջները՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և համակարգի միջոցով ծանուցել «Կոմպլենդ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը և ներկայացնել բացակայող փաստաթուղթը:*

## 4 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

---

(Գ.Հայրապետյան)

4.1 Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

| Չափաբաժին | Մասնակցի անվանումը | Նախահաշվային գինը | Առաջարկված գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Առաջարկված գինը |
|---|---|---|---|---|---|
| 1.Համակարգիչներ | «ԳՐԵԳԱՐՏՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ | 1080000 | 268044 /երկու հարյուր վաթսունութ հազար քառասունչորս/ | 0 /զրո/ | 268044/երկու հարյուր վաթսունութ հազար քառասունչորս/ |
| | Կոմպլենդ ՍՊԸ | | 853000 /ութ հարյուր հիսուներեք հազար/ | 170600/մեկ հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր/ | 1023600 /մեկ միլիոն քսաներեք հազար վեց հարյուր/ |
| | Կոմպասս ՍՊԸ | | 1100000 /մեկ միլիոն մեկ հարյուր հազար/ | 220000 /երկու հարյուր քսան հազար/ | 1320000 /մեկ միլիոն երեք հարյուր քսան հազար/ |
| 3.Անխափան սնուցման աղբյուրներ | <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ | 240000 | 141120 /մեկ հարյուր քառասունմեկ հազար մեկ հարյուր քսան/ | 28224 /քսանութ հազար երկու հարյուր քսանչորս/ | 169344 /մեկ հարյուր վաթսունինը հազար երեք հարյուր քառասունչորս/ |

**Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:**

***<<Կոմպասս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համակարգի միջոցով ինքնաշխատ եղանակով մերժվել է, քանի որ մասնակցի առաջարկած գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:***

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

**4. ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/1 ծածկագրով հայտարարված մրցույթի 2-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին**

---

(Գ.Հայրապետյան)

Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի /ոչ մի հայտ չի ներկայացվել/ **ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/1** ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժինը /բազմաֆունկցիոնալ տպիչ սարքերի ձեռքբերում/ հայտարարել չկայացած:
*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

**5 Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թվականի սեպտեմբերի 11-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:
*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ------------------Գ.Հայրապետյան

անդամներ՝ ------------------Ն.Խաչատրյան

------------------Լ.Խաչատրյան

------------------Է.Հովհաննիսյան

------------------Վ.Հայրապետյան

քարտուղար՝------------------Ա.Ավետիսյան